

**ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ՆՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ  
Կ. ԶԱՐՅԱՆԻ «ՆԱԿԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊՈՒՄ**

**Թ. Ա. ԱՍՈՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ԳԴՀ դասախոս*

**Ն. Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*Սագիստրատուրա բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի*

Լեզվական գրավոր և բանավոր հաղորդակցման ընթացքում ավելի հաճախ գործածվում են այնպիսի նախադասություններ, որոնցում առկա են առանցքային երկու գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը: Սակայն դրանց հետ միաժամանակ կարող են հանդես գալ նաև այնպիսի նախադասություններ, որոնց կազմում բացակայում են նշված կենտրոնական անդամները: Այդպիսի նախադասությունները ընդունված է անվանել միակազմ, միաբևեռ կամ միակենտրոն: Դրանք կառուցվածքային այնպիսի միավորներ են, որոնք ունեն՝

ա/ դիմավոր բայ, որը անվանում են նաև ստորոգյալ, սակայն որի ենթական չկա և հնարավոր էլ չէ վերականգնել կամ ներմուծել,

բ/ գլխավոր անդամների փոխարեն ունենում են գերադաս անդամ՝ անունով կամ դերբայով արտահայտված:

Նկատի ունենալով նշված հատկանիշները՝ միակազմ նախադասությունները բաժանում են երկու տեսակի՝ դիմավոր և անդեն: Սովորաբար դիմավոր միակազմ նախադասությունները ներկայացվում են ձևական, անորոշ և ընդհանրական տարատեսակներով, ոմանք էլ դրանք միավորում են մեկ ընդհանուր՝ անենթական նախադասություն անվան տակ, չնայած անենթական են ոչ միայն դրանք, այլև անդեն միակազմ նախադասությունները ևս: Անենթական նախադասություններում դիմավոր բայը կամ ստորոգյալը լինում է պարզ կամ բաղադրյալ /անվանաբայական/՝ արտահայտված տարբեր ժամանակաձևերով, դեմքերով, թվով: Անդեն նախադասությունների միակազմ լինելը պայմանավորված է նրանով, որ իր կազմում չունի դիմավոր բայ, դրա փոխարեն առկա է գերադաս անդամ՝ իր լրացումներով կամ առանց դրանց: Ընդունված է ասել, որ այսպիսի կառույցներում ստորոգման գործառույթն իրականացվում է հնչերանգի միջոցով:

Միակազմ նախադասությունների շարքին են դասվում նաև բառ-նախադասությունները: Միակազմ նախադասությունները բնորոշ են հայոց լեզվածառնություններին և իբրև լեզվական միավորներ՝ կազմում են հայերենի շարահյուսական համակարգի բաղկացուցիչ մասը: Հաղորդակցական պլանում դրանք համարժեք են երկկազմ նախադասություններին:

Չնայած միակազմ նախադասությունների տեսակարար կշիռը հայերենում մեծ չէ, սակայն ոճական լայն հնարավորություններ ունեն. կարծում են խոսքը, ասելիքը դարձնում են դիպուկ ու նպատակասլաց, պատկերավոր ու գեղագիտական:

Ընդհանրապես անենթական նախադասությունները բնորոշ են առօրյա-խո-

սակցական ոճին, ժողովրդական լեզվամտածողությամբ: Դրանց միջոցով արտահայտվում են մթնոլորտային երևույթներ, տարվա եղանակներ, միջավայրի և շրջապատի իրավիճակի հետ կապված զանազան հարաբերություններ: Օրինակներ՝ Գիշեր է: Ուշ էր /292/: Անհավատալի մի քառս էր /158/: Ձյունի եղանակ էր /226/: Ավելի ցրտեց /144/: Իսկական ջրհեղեղ էր 337/: Այն օրը քամի էր և անձրև /223/ :

Ամենթակա նախադասությունների լավագույն արտահայտություններն են առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, որոնց միջոցով են արտացոլվում ժողովրդի կենսափորձն ու իմաստությունը: Այնուամենայնիվ, Կ. Ջարյանի այս վեպում մեծ օրինակներ չեն հանդիպում: Դրա փոխարեն վեպում շատ են հանդիպում անորոշ-ամենթակա միակազմ նախադասություններ, որոնց դիմավոր բայն արտահայտված է հոգնակի 3-րդ դեմքով, սակայն գործողություն կատարողն անհայտ է, անորոշ: Այս երևույթի մասին Ս.Գյուլբուրադյանը գրում է. «Ենթական չհիշատակելը բոլոր դեպքերում ունի մեծ ոճական նշանակություն: Այդ ձևով խոսողը լսողի ուշադրությունը կենտրոնացնում է նախադասության բովանդակության, մտքի վրա, տեղի ունեցած դեպքի, երևույթի վրա»:

Օրինակներ՝ Ասում են՝ Լուսավորչից առաջ այս վայրերում մեծ և զորեղ աստվածներ էին ապրում /198/: Ասում են՝ Լեւին կանչել է վեզիրմեզիր և ասել, որ աշխարհի վրա էլ հարուստ չի ուզում, ասել է՝ ոսկի-մոսկի, հող, ապրանք տանեն, բաժանեն աղքատներին: Մեր հայրերից մեկը, որ ասում են՝ զոկ է, չոքել է առաջը... /311/: Անորոշ-ամենթակա նախադասություններ կարող են կազմվել մեծ սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի 2-րդ դեմքով. Կան բաներ, որ խոսքերով չես կարող հարցնել: Նրանց չես կարող ասել. Եթե ասես, քեզանից կփախչեն, կհեռանան.../198/:

Կ. Ջարյանը հաճախակի է կիրառում ընդհանրական ամենթակա նախադասություններ, «որոնք թեև պահում են դեմքի գաղափար, բայց ձևականորեն, դրանք արտահայտում են ընդհանրացնող նշանակություն, վերաբերում են բոլորին, այսպես ասած՝ ընդհանրապես մարդ արարածին և ոչ թե հատկապես և միայն տվյալ դեմքին, որով դրված է բայը»:

Օրինակներ՝ Մարդ երբ մեռակ է, ուզում է շուրջը ամեն ինչ ապրի /198/: Այդպես աղջկա համար մարդ կարող է հրաշք կատարել /208/: Մարդ առանց հավատի չի կարող ապրել /366/: Սերը վշտերով ցանված դաշտ է, որի միջից մարդ անցնում է ինքն իրեն հետ հանդիպելու համար /352/: Բարդ հարցեր են, այնքան բարդ, որ մարդ երբեմն մնում է շվարած /270/: Վալլահ, մարդ չի գիտեր՝ վաղը ինչ կրնա պատահել /169/: Մարդը մարդ չի լինի, եթե սեփական սատաման չունի /247/: Մարդ ապրում է այնպես, կարծես ամեն ինչ անվերջ է ու հավիտենական /130/: Կարելի է նկատել, որ Կ. Ջարյանը ընդհանրական ամենթակա միակազմ նախադասությունների միջոցով կատարում է փիլիսոփայական ընդհանրացումներ, որոնք կենսափորձի, անցած ճանապարհի խտացումներ են:

«Նավը լեռան վրա» վեպի լեզուն աչքի է ընկնում մեծ անդամ նախադասությունների հաճախակի կիրառությամբ, որոնք նույնպես նպաստում են վեպի լեզվի ոճական հնարավորությունների դրսևորմանը: Անդամ միակազմ նախադասությունների առանձնահատկությունն այն է, որ ոչ սովորական կառույցներ են այն առումով, որ չունեն դիմավոր բայ, բայց կարող են ունենալ իրենց դիմավոր հո-

մանիշները: Նկատի ունենալով սա՝ Հ. Հարությունյանը գրում է. «Հենց այս ոչ-սովորականությունն էլ նրանց գործածությունը դարձնում է զուտ ոճական, որը բխում է նրանց կառուցվածքային առանձնահատկությունից»: Ընդհանրապես անդեն մախադասությունների գործածության հաճախականությունը համեմատաբար մեծ է գեղարվեստական խոսքում: Այդպիսի մախադասությունների կիրառությունն այն տպավորությունն է ստեղծում, թե գործողությունը, իրադարձությունը կատարվում է իրականում, աչքիդ առաջ: Նույնիսկ առավել արտահայտչականության հասնելու համար գրողը նպատակահարմար է գտնում մասնատել մախադասությունը և մասնատված հատվածները կամ անփոփոխ, կամ փոքրինչ փոփոխված գործածել իբրև առանձին մախադասություններ: Բոլոր դեպքերում գրողն ընտրում է այնպիսի կառույցներ, որոնցով ավելի ճշգրիտ ընթերցողին կհասցնի ասելիքը: Սրանց ոճական բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երկկազմ մախադասությունների հետ համեմատած՝ ավելի սեղմ են ու հուզական: Ըստ Հ. Հարությունյանի՝ սրանց գործածության ոլորտներն են հիմնականում խոսակցական լեզուն և գեղարվեստական գրականությունը:

Անդեն մախադասությունները լինում են երկու տեսակ՝ անվանական և բայական: Այդպես են կոչվում ըստ գերադաս անդամի անուն կամ բայ խոսքի մաս լինելու հանգամանքի: Գեղարվեստական գրականության բոլոր ժանրերում էլ հանդիպում են անվանական անդեն մախադասություններ, որոնք հանդես են գալիս հատկապես հեղինակային նկարագրություններում: Նշված վեպում մեծ թիվ են կազմում անվանական անդեն մախադասությունները: Օրինակներ՝ Սառած ծառերով ծածկված երերող բլուրներ /285/: Քամի: Ցուրտ: Մենակություն /293/: Մաշված գյուղացու չուխա, ոտքին տրեխներ, գլխին առատ մի փափախ, որի բրդե ծայրերը ընկնում էին մինչև հոնքերը /330/: Քարեր, ճաղատ գետին: Մի լճակ: Լարծուն ջուր, փտած տերևներ, մամռոտ, լորձունքոտ փայտի կտորներ, կանաչ ցեխ /340/: Լռություն և արև /340/: Փողոց: Նավ: Գաղթականներ: Հրացանածգություն /390/: Լիճ, լեռներ, ամայություն, լռություն /365/: Հայոց աշխարհ, մենակությունների, լռությունների աշխարհ /286/: Բերված օրինակներում միանգամայն ակնառու ցուցադրված են թե՛ հասարակական-քաղաքական իրավիճակ, թե՛ եղանակային անբարենպաստ պայմաններ, թե՛ տարածքի նկարագրություն և այն էլ որոշակի տրամադրվածությամբ:

Կ. Ջարյանը չի խուսափում նաև ծավալուն նկարագրությունները անվանական անդեն մախադասություններով ներկայացնելուց՝ խոսքում չգործածելով ոչ մի ստորոգյալ:

Օրինակ՝ Խոնարի դաշտանկարների ծայրին կանգնած մենակյաց կացարաններ: Բլուրներ, կովեր, այծեր, գյուղացիներ: Գնացքի ներսում մեկը մյուսի վրա ընկած մարմիններ, պայուսակներ, արկղեր, տոպրակներ: Գետինը պառկած կանայք, դիզված իրեղենների կատարին քնած մոմի գույն երեխաներ, կկզած ծերունիներ՝ մազոտ ձեռքերը կրծքների վրա սեղմած, աչքերը լայն բաց արած և դեղնած ատամները դուրս ցցած /135/: Օրինակները կարելի է շարունակել:

Սովորաբար անվանական անդեն մախադասություններ խոսողն օգտագործում է այն ժամանակ, երբ ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ անհրաժեշտություն է առաջանում կամային-հոգեկան որոշակի վերաբերմունք արտահայտել: Գրողը լավ գիտի, որ հուզմունքը, զարմանքը, հիացմունքն ու շփոթվածությունը

լավագույնս կարելի է արտահայտել հենց նման նախադասությունների միջոցով: Հոգեկան խիստ լարված իրադրության մեջ շատ հաճախ հնարավոր չէ «նորմալ» նախադասություններ կազմել: Նման իրավիճակներում խոսքը կցկտուր է, համառոտ, ասվում են միայն խիստ անհրաժեշտ բառերը, առավել արտահայտիչ է դառնում հնչերանգը՝ իր վրա կրելով նույնիսկ իմաստային որոշակի բեռ: Դա էլ իր հերթին նպաստում է լեզվական սեղմության՝ օգնելով ցուցադրելու ստեղծագործության նյութի ոճական հնարավորությունները: Բերենք մի քանի օրինակներ. Հաց, հաց /166/: Ջուր, ջուր,- չորացած շրթները շարժելով՝ խնդրում էին շատերը /155/: Ձենք, զենք,- բացականչեցին ամեն կողմից: Կրակ.../157/: Այքեզ դրություն...: Պատերա՞զմ.../281/: Նա՞վ, Երևանու՞մ: Ի՞նչ նավ /393/: Հայաստա՞նը- հարց էր տալիս Հերյանը զարմացած և հետաքրքրված,- այ քեզ նորություն...: Ցուրտ: Ձյուն: Լռություն /285/: Ուշադրություն, ուշադրություն.../323/: Սրիկաներ, սրիկաներ.../222/:

Հաղորդակցման ժամանակ՝ երկխոսությունների, զրույցների ընթացքում հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ հոգեկան լարվածությունը, հուզմունքը կարող են պատճառ դառնալ, որ խոսակիցը չկարողանա լիարժեք պատասխան տալ և վերաբերմունքն արտահայտի մեկ բառով: Այդ կառույցները կարելի է անվանել կոչական անվանական նախադասություններ: Օրինակ՝ -Տեր աստված,- ասում էր նա,- տեր աստված /317/: -Թագավոր,- փսփսացին նրա ջերմոտ շրթունքները:- Իմպերատոր... /398/: Միակազմ անվանական նախադասություններ են համարվում նաև ողջույնի, մաղթանքի, անեծքի խոսքերը, կոչերը, քանի որ այդ կառույցներին էլ է բնորոշ հուզականությունը: Այդպիսի օրինակներով հարուստ է «Նավը լեռան վրա» վեպը:

Օրինակներ՝ -Աստծո բարին ամենքին,- ողջունեց կույրը՝ կրակից քիչ հեռու կանգնելով /330/:

-Բա՛րև ձեզ, տղերք ջան,- ողջունեց նա ուրախ ձայնով: -Բարո՛վ, հազա՛ր բարով,- պատասխանեցին բանվորները /182/: -Պարոններ, ցը՛.../342/: -Ուրեմն, գիշեր բարի... /380/: -Քուրդ էլ, հերդ էլ, մերդ էլ,- աղաղակեց կիմը կատաղած ձայնով /396/: -Բա՛րև, Սևա՛ն ջան,- փսփսացին նրա շուրթերը /209/:

Բայական անդեմ նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է հիմնականում անորոշ դերբայով, չնայած երբեմն հանդես է գալիս նաև հարակատար դերբայը: Բնականաբար նման գործողությունները չեն կարող բնութագրվել դեմքի, թվի, ժամանակի քերականական կարգերով: Ըստ երևույթին կարևորվում է ոչ թե գործողությունը, այլ գործողը, դրա համար էլ վերջինս բառական արտահայտություն չի ունենում: Դիմաթվային և եղանակաժամանակային սահմանափակումներից զերծ լինելով՝ խոսքաշարային տարբեր իրադրություններում նույն կառույցը կարող է տարբեր դրությունների արտահայտիչ լինել: Փաստորեն մեծանում են կառույցի ոճական հնարավորությունները: Պետք է ասել, որ բայական անդեմ կառույցները բազմազանություն են դրսևորում նաև հնչերանգի առումով: Դիտված է, որ գեղարվեստական գրականության մեջ գործածության հաճախականությամբ առանձնանում են հարցական, հրամայական, բացականչական անդեմ նախադասությունները, պատմողականները գրեթե բացառվում են, մինչդեռ լեզվական հաղորդակցման հիմնական միջոցները հենց վերջիններս են իրենց երկկազմ կառուցվածքով: Երևույթը կարելի է բացատրել

հուզական-զգացական երանգներ ունենալ-չունենալու հատկանիշով: Առավել տարածված են հարցական հնչերանգով բայական անդեմ նախադասությունները, և դա բացատրելի է. Կ. Ջարյանի նկարագրած ժամանակաշրջանը հարցականներով լի շրջան է թե՛ քաղաքական, թե՛ հասարակական, թե՛ տնտեսական առումներով, որոնց միջով էին անցնում մարդկային – անձնական ճակատագրերը: Ահա մի քանի օրինակներ՝ Լավ, հիմա ի՞նչ անել: Ինչու՞ հիշել միայն վիշտը /354/: Մոռանալ երեսուն դարի պատմությունը /266/: Չգիտեին ինչ անել. մեկնե՞լ, մնա՞լ /329/: Ե՞ս... զառանցե՞լ... /377/: Յերոսի վիճակը անորոշ է, և կողմնորոշվելու անհրաժեշտություն է զգացվում :

Հարցական անդեմ նախադասություններին իրենց արտահայտչականությամբ և գործածության հաճախականությամբ չեն զիջում հրամայականները: Սրանք էլ ունեն իրենց յուրահատկությունները. կտրուկ են, հակիրճ ու անառարկելի: Այս հատկանիշների պատճառով էլ նման կառույցների գործածության ոլորտը սահմանափակվում է հիմնականում զինվորական, ռազմական կյանք պատկերող երկերի շրջանակներում: Իսկ ընդհանրապես այդ նախադասությունների կարիքն զգացվում է այնպիսի իրավիճակներում, երբ խիստ անհրաժեշտություն է դառնում վճռական գործողությունների դիմելը կամ մղելը: «Նավը լեռան վրա» վեպում, կապված նկարագրվող իրադարձությունների բնույթի հետ, քիչ են այդպիսի իրավիճակները: Բերենք մի քանի օրինակներ. – Ամիջապես դադարեցնել՝ նավի վերաբերյալ բոլոր աշխատանքները /438/: Հաշվել՝ մարդկանց /452/: Հավաքել՝ փողհարներին /452/:

Միակազմ նախադասությունների տարատեսակներից են նաև բառ-նախադասությունները: Դրանք պատասխանական բնույթի կառույցներ են՝ արտահայտված եղանակավորող բառերով և ձայնարկություններով: Այդ նախադասությունների միջոցով խոսողն իր վերաբերմունքն է արտահայտում այս կամ այն երևույթի, առարկայի նկատմամբ: Դրանով էլ պայմանավորված՝ վերաբերականը կամ ձայնարկությունը ձեռք են բերում հաղորդակցական արժեք՝ հավասարվելով սովորական նախադասություններին: Հասկանալի է, որ բառ-նախադասությունները մեծ մասամբ հատուկ կարող են լինել երկխոսություններին: Օրինակներ՝ -Այո, այո, այո, նա վատ և անճիշտ է երգում /195/: -Չէ՛, խնդրում եմ, չէ՛..., -Հերյանը շուռ եկավ և արագ հեռացավ /223/: -Դե՛, մեկ էլ խմենք...: -Չէ՛, չէ՛, չէ՛... /240/: -Հա՛, էլի... Ո՞վ է իմանում՝ այդ բաները գալիս, տեղ են բռնում գլխումս /198/: Մաշալա... ձեր կենացը /194/: Նկատելի է, որ բառ-նախադասությունները հիմնականում արտահայտում են հաստատում կամ ժխտում և կարող են գործածվել ինչպես նախադասության անդամի, այնպես էլ ցանկացած միտք արտահայտող կապակցությունների փոխարեն: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ Պ. Պողոսյանը պատասխանական այո և ոչ բառերը համեմատում է դերանունների հետ, որոնք չունեն տարբերակված բառային իմաստներ և կարող են ցանկացած պահի արտահայտել իրեց ոլորտին բնորոշ ցանկացած իմաստ ու բովանդակություն: Բոլոր դեպքերում այդ նախադասությունների միջոցով խուսափում ենք ոչ միայն ասվածը կրկնելուց, այլև խոսքը դարձնում ենք խիստ համառոտ: Սա էլ հենց այդ կառույցների ոճական առանձնահատկությունն է:

Կ. Ջարյանի «Նավը լեռան վրա» վեպում շատ են միակազմ նախադասությունները, որոնցից ավելի շատ են հանդիպում անվանական անդեմ նախադա-

սությունները: Պետք է ասել, որ գրողը կարողացել է ճիշտ գնահատել դրանց ոճական-արտահայտչական հնարավորությունները և ըստ անհրաժեշտության գործածել իր ստեղծագործության մեջ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աբրահամյան Ս.*, Հայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, 2004:
2. *Գյուլբուդյան Ս.*, Սիակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967:
3. *Եզեկյան Լ.*, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2007:
4. *Ջարյան Կ.*, Երկեր, Երևան, 1985:
5. *Հարությունյան Հ.*, Գեղարվեստական խոսք, Երևան, 1986:
6. *Պապոյան Արտ., Բադիկյան Խ.*, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003:

#### ОДНОСОСТАВНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В РОМАНЕ К. ЗАРЬЯНА "КОРАБЛЬ НА ГОРЕ"

*Т. А. Асоян  
Н. К. Варданян*

В статье рассматриваются односоставные предложения в романе К. Зарьяна «Корабль на горе». В армянском языке есть предложения разных форм. К ним относятся односоставные и двусоставные предложения. Хотя не так велик удельный вес односоставных предложений, они имеют разные возможности.

В романе К. Зарьяна «Корабль на горе» автор употребил разнообразные многочисленные односоставные предложения, которые стали стилистическими проявлениями духовных переживаний, явлений, ситуаций.

В статье дана их языковая характеристика, сделана классификация.

#### ONE PART OF SENTENCES IN THE NOVEL "THE SHIP ON THE MOUNTAIN" BY K. ZARYAN

*T. A. Asoyan  
N. K. Vardanyan*

There are different kinds of structural sentences in Armenian language. Among them are onepart sentences and two part sentences. The number of onepart sentences are not large but they have various stylistic possibilities.

In the novel of K. Zaryan "The Ship On The Mountain" a number of onepart sentences are used by the author, they became ways of stylistic expressions denoting emotions, states, different phenomena.